

Ա. Մայիսյան
ՀՍՍՌ ԳԱ Ի-Կ-Կ-Ն - ՆԴ-Մ

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Գլուխահար Կ. Մելիք-Օհանջանյանը Ակադեմիայի 1945 թ. № 5 Տեղեկագրում (հասարակական գիտությունների սերիա) զետեղել է մի հոդված՝ «Մովսես Խորենացու Հայոց պատմության երկու պատառիկ» վերնագրով, որի մեջ համեմատում է Խորենացուց երկու հատված Մատենադարանի № 8382 ձեռագիր Տոնականում պահված պատառիկների հետ, որոնք որոշ, երբեմն կարևոր ասարբերություններ ունին ապագրված Խորենացուց, և որոնց Պատմության հրատարակիչները նկատի չեն ունեցել և չեն օգտվել։ Իհարկե, շատ ցանկալի կլինեի, խնչպես հոդվածագիրը հայտնել է, որ հին հեղինակների հրատարակիչներն աչքի առաջ ունենային բազմաթիվ ձեռագրերում (տոնականներ, ճառընտիրներ և այլն) ցրված մանր հատուկությունները, բայց կատարել ներկա պայմաններում, երբ այդ պատառիկները չեն տպված, ոչ գոնե ցուցակագրված՝ գրեթե անկարելի է։ Արդեն մեծ աջողություն պետք է համարել, որ Խորենացու վերջին՝ քննական հրատարակությունը կատարված է 37 ձեռագրի մանրամասն բաղդատությամբ։ Բայց էականը այս չէ։

Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի բաղղատած երկրորդ հատվածը պարունակում է Թեոդոս կայսեր նամակը Սահակ կաթողիկոսին (գիրք Դ, գլ. ԾԷ)։ Այս հատվածում կա մի խոշոր տարբերություն տպագրված Խոբենացու և Տոնականի ձեռագրի մեջ այսպես—

Հատ տպգր. Խորենացու

Ե ղքեղ պատուեալ ընկալցին որ-
պէս զարդարև վարդապետ իւրեանց,
հանգոյն արքեպիսկոպոսին Կեսա-
րու, դարմանք և ծախք յարքու-
նուստ եղիցին, եւ հրամայեցաք...

ՀԱՄ ՏՈՆԱԿԱՆ ՃԵՌԱԳՐԻ

և զքեզ պատուով ընդունել որպէս զարդարև վարդապետ իւրեանց հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու։ Եւ դպրոցք կարգեսցիք յամենայն իշխանութեան մերում քաղմութիւնք մանկսուոց ժողովեալ և դարմանք և ծախք յարքունուսա եղիցին, և հրամայեցաք...

Այս համեմատությունից երևում է, որ աշակերտներ ժողովելու հատվածը պակասում է տպագրված խորհրդային մեջ և արքայական հաշվով ծախսը, որ ըստ Տոնականի վերաբերում է բացվելիք դպրոցներին, տպագրի մեջ վերաբերում է Սահակ կաթողիկոսին:

Այս տարբերությունը կարող է առաջ եկած լինել երկու ճանապարհով
կամ 1. Այս հատվածը (դպրոցների բացման մասին) եղել է Խորենա-
ցու Պատմության սկզբնական օրինակներում, որից և Տոնականի խմբա-

դիրը օգտվել է յուր պաաառիկը կազմելիս, բայց հետո, անհայա պատ-
ճառներով, դուրս է ձգվել հանրոգ ձեռագիրներին մեջ, որոնք հասել են մեր
ձեռքը:

Կամ 2. Այս հատվածը երբեք չէ եղել խորենացու Պատմության մեջ,
այլ Տոնականի խմբագրողի ավելացրածն է, որին իրեն աղբյուր է ծառա-
յել այստեղ Կորյունը: Կորյունը Թեոդոս կայսեր նամակը չէ բերում, բայց
հիշում է, որ Անատոլիոս սպարապետն անմիջապես կաաարում էր հրամա-
նս. «Եւ հրեշտակս արձակեալ ախուհետև ի գաւառս կէս աղդին Հայոց
յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտույ ժողովել և նոցին ոռճիկս
կարգել ի պատեհագոյն տեղիս, յորս և երանելին (Մաշտոց) զվարդապե-
տութիւնն իւր ի գործ արկեալ...»:

Երբն է այս երկու կարելիութիւններից ավելի հավանականը: Պրոֆ.
Մելիք-Օհանջանյանը առաջին կարծիքին է, այսինքն. որ այս հատվածը
հապավիած է խորենացու Պատմությանից: Նրա այս կարծիքին ուժ է
տալիս Կորյունից վերը բերած հատվածը, որը և Տոնականի խմբագրողը
ավելի է ընդարձակել և ընդհանրացրել. դարձյալ և այն հանգամանքը,
որ այս հատվածը տեղին է և լավ հարմարվում է դպրոցներին:

Բայց կան հակառակ կարծիքը հաստատող հանգամանքներ, որոնք
ցույց են տալիս, որ այդ հատվածը խորենացուց չէ, այլ Տոնականը կազ-
մող անհայտ խմբագրի ավելացրածը ազդվելով Կորյունից: Այսպիսի հա-
վելումներ ուրիշ տեղեր էլ կան խորենացու պատմության մեջ: Այս հան-
գամանքները հետևյալներն են.

Ո՛չ Կորյունը և ոչ խորենացին չեն գրում, թե Հայաստանի պարս-
կական բաժնում, որտեղ ապրում էին Վառձապուհ թագավորը և Սահակ
կաթողիկոսը, բացվելիք դպրոցները պետք է պահպանվեին արքունա-
կան հաշվով: Դուրս է գալիս մի անօրինակ եզրակացութիւն, — Թեոդոս
կայսրը ավելի հայասեր է եղել, ավելի հոգս է քաշել իր հպատակ հայերի
հայերեն ուսման՝ արքունական ծախսեր նշանակելով. քան Պարսկահայ-
քում Վառձապուհ Բագավորն ու Սահակ կաթողիկոսը: Այն-ինչ ձուլման
քաղաքականության տեսակետից, որին հետևում էին հույները՝ նրանց
բնավ էլ ցանկալի չէր լինի հայ լեզվի և հայերեն դպրության զարգացումը
իրենց բաժնում:

Դարձյալ պատմական իրականության հակառակ է դուրս գալիս, թե
կայսրը (կամ թագավորը) հրաման արձակեցին՝ բոլոր գավառներում դրպ-
րոցներ բանալ արքունական հաշվով: Այս ժամանակ ամբողջ Հայաստանը
Ֆեոդալական կազմ ունեւր, ամեն մի նախարար լիակատար տեր էր իր կալ-
վածում, և առանց նրանց համաձայնության չէր կարելի նրանց կալված-
ներում դպրոցներ բանալ և արքունական ծախսով կառավարել:

Համոզվելու համար այս բանում՝ տեսնենք ինչ են հաղորդում Կոր-
յունը և խորենացին դպրոցների բացման մասին:

Ըստ Կորյունի Մեսրոպը թագավորի հրամանով դնում է ուսուցանե-
լու Մարաց կողմերը (Մասիսի ստորոտները դեպի Նախիջևան). Հայաստանի
զանազան գավառներից մարդիկ ինքնակամ գալիս էին Վաղարշապատ ու-
սանելու: Սահակ կաթողիկոսը ինքը սկսում է ուսուցանել Մամիկոնյան
տոհմի մարդկանց և հատկապես Վարդան սպարապետին: Ապա Մեսրոպը
գնում է Գողթն գավառի գլխավոր քաղաքը (Ագուլիս) և ամբողջ գավառը

ուսուցանում է օգնութեամբ և օժանդակութեամբ Շաբիթ իշխանի և նրա Գիտ որդու Այստեղից գնում է սահմանակից Սյունյաց աշխարհը. նրան սիրով ընդունում է Վաղինակ իշխանը, մեծ օգնականութիւն ցույց տալով, ժողովում է մանուկներ և ուսուցանում. մեծ օգնութիւն է ցույց տալիս Վաղինակի հաջորդը՝ Վասակը, որին Կորյունը շնայում է շատ գովեստներով։ Քիչ հետո Մեսրոպը գնում է Վրաստան, ներկայանում է Բակուր Թագավորին և Մովսես եպիսկոպոսին—հորինում է վրացերեն լեզվի համար այբուբեն Զապաշի օգնութեամբ, այնուհետև Թագավորի թույլտվութեամբ ժողովում է աշակերտներ և ուսուցանում. Այնուհետև, Վաղարշապատ հանդիպելուց և կաթողիկոսին զեկույցում տալուց հետո, գնում է Բյուզանդիոն, կայսրից թույլտվութիւն է ստանում հունական բաժնում հայերեն զբոսնելու և սովորեցնելու. Անատոլիոս սպարապետը կայսերական հրամանը կատարելով՝ գաղառներից պատգամավորների միջոցով աշակերտներ է բերել տալիս և տեղավորում հարմար դպրոցում, ապրուստի միջոց նշանակում, որոնց և ուսուցանում է Մեսրոպը. Այնուհետև Մեսրոպը գալիս է Աղվանք, հնարում է աղվաններին այբուբեն՝ Բենիամին անունով մի աղվանի օգնութեամբ. Այնուհետև Աղվանից Արսվազին Թագավորի և Երեմիա եպիսկոպոսի հետ տեսակցում է, ընդունվում է մեծարանքով, հրամայում են գաղառներից բազմաթիւ մանուկներ տալ ուսման, հարմար տեղերում, նշանակելով ապրուստի միջոցներ. Մեսրոպը գալիս է Գարդմանաձոր, ուսուցանում է նրա Թուրս իշխանին, հետո գալիս է Տաշիրք, տեղի իշխանը Աշուշա եւ Սամուել եպիսկոպոսը աջակից են լինում նրա ուսուցողական գործին։

Ըստ Խորենացու—երբ Մեսրոպը Հայաստան է բերում նորագոյտ գրերը, Վռամշապուհ Թագավորի և Սահակ կաթողիկոսի հրամանով մանուկներ են ժողովում և դպրոցներ հաստատում բոլոր գաղառներում։

Մեսրոպը գնում է Վրաստան, գրեր է հորինում. Բակուր Թագավորի և Մովսես եպիսկոպոսի ձեռնտվութեամբ մանուկներ են ժողովում և ուսուցանում. Գնում է Աղվանք. Արսվազին Թագավորը և Երեմիա եպիսկոպոսը ընտիր մանուկներ են տալիս նրան ուսուցանելու. Գնում է Բյուզանդիոն, վերադառնալիս կայսեր հրամանը հանձնում է Անատոլիոսին, և իսկույն գործի են անցնում, իշխաններ, գործակալներ, զլխավորներ, քահանայական դասի հետ միաժամ գալիս հասնում են մի տեղ, որոնց անմիջապես ուսուցանում է Մեսրոպը։—Այսպես նաև Գողթնում Շաբիթ իշխանի որդու օգնութեամբ, Բաղասական կողմերը՝ Մուշեղ եպիսկոպոսի աջակցութեամբ. Գարդմանաձոր՝ Թուրս իշխանի օգնութեամբ, ինչպես նաև Գուգարաց բղեշխութիւնը, Աշուշայի հրավերով, որտեղ հիմնովին ուսուցանում է։

Այս երկու ժամանակակից հեղինակների տեղեկութիւնները ցույց են տալիս, որ դպրոցներ բանալը բոլոր գաղառներում այնպես պարզ ձևով չէր կատարվում—կայսեր կամ Թագավորի մի հրամանով—այլ սրա համար հարկավոր էր լինում, որ ինքը Մեսրոպը, այս անգուղական անխոնջ առաքյալը, անձամբ շրջի գաղառները, տեսակցի տեղերի իշխանների և եպիսկոպոսների հետ, ճարտար լեզվով հորդորե և համոզե նրանց և նրանց համաձայնութեամբ բանա մի ստորակարգ դպրոց, որի ծախսը բնականապես պետք է հոգային իշխաններն ու եպիսկոպոսները. Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել հունական բաժնում, որտեղ չկար Մեսրոպը և տեղական

հույն իշխանները նախանձախնդիր չէին հայերեն գրագիտության զարգանալուն:

Կա ե մի ուրիշ հանգամանք էլ, որ ապացուցում է Տոնականի խմբագրության անհարազատությունը: Ենթադրենք մի ըոպե. թե Խորենացու սկզբնական բնագրում եղել է վերոհիշյալ հատվածը, որից փոխ է առել Տոնականի խմբագիրը. նշանակում է՝ այս հատվածը ունեցել են Խորենացու Պատմության բոլոր հին ձեռագրերը ե ոչ միայն Տոնականի խմբագրի տեսածը: Խոսք չի կարող լինել, որ այդ հատվածը չի պարունակում ոչ մի անպատմություն կամ անարգանք հայ ազգի համար, որի պատճառով արտագրողները նրան դուրս ձգելն նոր օրինակները գրելիս: Ապա ինչու Խորենացու այս 37 օրինակներից ոչ մեկում մի հետք անգամ չկա այս հատվածից: Ինչու նա կորավ: Զէ՞ որ այժմ գոյություն ունեցող օրինակները արտագրված են այն հին՝ սկզբնական բնագրերից, որոնք բոլորը ունեցել են այս հատվածը: Այժմյան ձեռագիրներից երկուսը, որոնք քննական հրատարակության մեջ նշանակված են 1 ե Կ՝ գրերով՝ պատկառելի հնություն ունին. այս հատվածը պետք է գտնվեր Կ՝ ձեռագրի հին մասում, որը ԺԳ—ԺԴ դարից է, իսկ 1-ի բնագիրը ավելի հին է, այսպես կոչված լամբրոնյան օրինակը: Սրանք բոլորն էլ մի բառ անգամ չունին այս կասկածելի հատվածից: Սրանից եզրակացնում եմ, որ այդ հատվածը երբեք չի եղել Խորենացու Պատմության մեջ, այլ յուր գլխից ավելացրել է Տոնականի խմբագիրը, օգտվելով Կորյունից, որից բառացի առել է «Բազմութիւնք մանկտւոց ժողովելն բառերը, երկու քերականական սխալներով (բազմութիւնք մանկտւոց):

Այնպես որ եթե ես լինեի Խորենացու Պատմության խմբագրողը և ծանոթ լինեի Տոնականի այդ հավելյալ հատվածին՝ ես չէի համարձակի սրան դնել Պատմության բնագրի մեջ, այլ կնշանակեի ծանոթությունների բաժնում, իբրև մի նոր վարիանտ:

Բայց հարցը Վարանով չէ վերջանում, այլ սկսվում է այստեղից: Ես դործ ունեի Խորենացու բնագրի հետ, թարգմանել էի այնպես, ինչպես որ դրված է,¹ ըստ որում արքունական ծախսը հատկացվում է Սահակ կաթողիկոսի ապրուստին (և ոչ նորարաց դպրոցների պահպանման): Այս առիթով պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը հարձակվում է Խորենացու երկու թարգմանիչների՝ Մ. Էմինի և Իմ վրա: Նա ասում է՝ «Նրանք [Մ. Էմինը և ես] կասկածի տակ չառնելով տպագիր տեքստը՝ ամենայն հանգստությամբ թարգմանել են այն և չեն տարակուսել, որ մեղանշում են պատմական բացահայտ իրականության դեմ: Դուրս է գալիս, որ Հուսավորչի առիժը այնքան ընչազուրկ էր. տնանկ ու խեղճ, որ նրա սնունդն ու ծախսերը պետք է բյուզանդական արքունիքը հոգար... Երբ այդ հատվածի տեքստը նույնիսկ աղճատ չեն համարել... այնուամենայնիվ մեր անվանի թարգմանիչներն իրենց կասկածը հայտնած պիտի լինեին ծանոթությունների կարգով դրանց բովանդակության անհեթեթության մասին... Հակառակ դեպքում Սահակ Պարթևի նման ականավոր հայ կաթողիկոսը հանդես կգա սեղանորդի (нахлебник) դերում»:

¹ Իմ թարգմանության ապագրության մեջ մի ստորակետ պակաս է գրված, որով մի-թե աղավաղվում է. ապագրված է «Կեսարիայի արքեպիսկոպոսի նման սնունդն... պետք է լինեի «Կեսարիայի արքեպիսկոպոսի նման, սնունդն...»:

Ես իմ կողմից կխոսիմ: Ի՛նչ մեղքս թաքցնեմ, իմ մտքովս էլ չէր անցել այս մտքով մի ծանոթություն զրեւ այս հատվածի մասին, քանի որ չէի կարող երևակայել, թե նրան այսպիսի մեկնաբանում կարող էին տալ: Ես բոլորովին այլ կարծիք եմ ունեցել և ունիմ այդ հատվածի մասին: Թեոդոս կայսրի կողմից Սահակ կաթողիկոսին կերակուր և պիտույք մատակարարելը ես համարել եմ իբրև մի բարյացակամություն նրա կողմից, իբրև մի հյուրընկալության ցույց հայոց կաթողիկոսին, երբ սա անցնե՞ր հունական բաժինը, կայսեր իշխանության սահմանները—նրան իբրև հյուր ընդունելու և պատվելու համար: Չէ՞ որ մեր օրերում էլ, երբ մի օտար երկրից շատ հայտնի դիտնական կամ ականավոր դործիչ դալիս է մեր երկիրը, կառավարությունը նրան հյուր է ընդունում, նրան մատակարարում է բնակարան, պարեն և այլ զվարճություններ: Սա, իհարկե, նրա պատճառով չէ, որ եկվորը ընչազուրկ, կարոտ մեկն է, այլ լուկ պատվի համար: Նույնպես եղել է նաև Սահակ կաթողիկոսի նկատմամբ: Դեռ ավելին էլ կա: Երբ Սահակ կաթողիկոսը մի քանի ուղեկիցներով հունաց բաժինը ղնար իբրև բարձրաստիճան հովիվ յուր հոտին այցելելու, նա կատարում էր յուր պաշտոնը նման կեսարիայի արքեպիսկոպոսին: Այսպիսի դեպքում նա չէր կարող ճանաչվել իբրև սոսկ մարդ, մասնավոր ուղևոր, այլ իբրև բարձրաստիճան պաշտոնյա, որ պաշտոնական գործով է եկել: Ուրեմն անհրաժեշտ էր, որ տեղական իշխանությունները նրան արժանավայել պատվով ընդունեն և ցույց տան պատշաճավոր հյուրընկալություն:

Ես հետաքրքրվեցի իմանալու, ի՛նչպես են այս հատվածը բացատրել ուրիշ բանասերներ: Մ. Գարադաշյանը (Քննական պատմություն, հատ. Դ, եր. 219) և Գր. Խալաթյանցը (Армянские Аршакиды, եր. 324—325), որոնք բերում և քննադատում են Թեոդոս կայսեր այս նամակը՝ ոչ մի դիտողություն չեն անում այս հարցի մասին, Սահակ կաթողիկոսի արքունիքից դարման և ծախսեր նշանակելը չեն համարում ստորութիւն կամ անարգանք կաթողիկոսի համար: Մի քայլ առաջ է գնում Օրմանյանը (Ազգապատմութիւն, եր. 292). նա գրում է. «Բյուզանդիո արքունիքին կողմե եղած շնորհներուն կարգին հրամայված էր ևս, որ Սահակի և դպրոցներու համար դարմանք և ծախք հարքունուստ լինին»: Ուրեմն Օրմանյանը շնորհ է կոչում Սահակ կաթողիկոսին ցույց տրված այս ընդունելությունը:

Իմ եզրակացությունն է.

1. Տոնականում բերված հատվածը՝ դպրոցները արքունական հաշվով պահելու մասին՝ հարադատ չէ, այլ Տոնականի խմբագրի ավելացրածն է Կորյունի անաջող հետևողությամբ:

2. Խորենացու մոտ հիշատակված հրամանը, որ Սահակ կաթողիկոսի դարմանն ու ծախքերը (չունական բաժնում) արքունական հաշվով լինին՝ պատվի ցույց է Սահակ կաթողիկոսի նկատմամբ, իբրև հյուրընկալության նշանավոր այցելուի: